Արձանագրություն N 3

ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտի համայնքապետարանի կարիքների համար «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի մասին/շարունակություն/

Գ.Գառնահովիտ

«01» սեպտեմբերի 2020թ.
Ժամը՝ 12:30

Մասնակցում էին՝

Գնահատող Հանձնաժողովի նախագահ՝	Նարինե Արշակյան- Գառնահովիտ համայնքի համայնքապետարանի հաշվապահ
Հանձնաժողովի անդամներ՝	Ռոբերտ Անտոնյան- Գառնահովիտ համայնքի համայնքապետարանի անասնաբույժ
	Աշոտ Պապանյան- Գառնահովիտ համայնքի համայնքապետարանի ջրերի հսկիչ
Գնումները համակարգող ՝	Արտյոմ Գևորգյան

Օրակարգ

«ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Նարինե Արշակյան)

1. «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և ՀՀ ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշման մասին

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

1. «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի և ՀՀ ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշման մասին

(Նարինե Արշակյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 05.08.2020թ.-ին «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով ԳՀ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով <Գնումների մասին> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները որոշել էր «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել:

14.08.2020թ. /հրապարակվել է 17.08.2020թ./ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին /Այսուհետև՝ ԳԲՔԱ/ ներկայացվել է բողոք՝ Պարտավորեցնել ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել 07.08.2020թ. թիվ 2 արձանագրությունը ամբողջությամբ, «Սոլարա» ՍՊԸ-ին տալ ծրարի շտկման հնարավորություն, այնուհետև գնահատել մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և որոշել ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաղթողին:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի ԳԲՔԱ-ին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

26.08.2020թ. /հրապարակվել է 28.08.2020թ./ ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշել է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժել:

«Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշումը հրապարակված են www.gnumner.am կայքում:

1.2 ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ԳԲՔԱ-ի կողմից կայացված որոշումը, որոշեց շարունակել ընթացակարգը:

1.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց 05.08.2020թ. նիստի արձանագրության 4-րդ կետով «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու և 8.1 կետով՝ «Մ.Ո.Գ-ՇԻՆ» ՍՊԸ-ին որպես ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները թողնել անփոփոխ:

1.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները:

1.5 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան ընտրված մասնակցի հետ համապատասխան պայմանագիր կնքելու օրվան հաջորդ աշխատանքային օրը ժամը 15:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	_____	Նարինե Արշակյան
հանձնաժողովի անդամներ՝	_____	Ռոբերտ Անտոնյան
	_____	Աշոտ Պապանյան
Գնումները համակարգող ՝	_____	Արտյոմ Գևորգյան

h.33443
12-08-2020թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *ՀՀ ֆինանսների նախարարություն*

Դիմող՝ *ՎԱՐՈՒԺԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ Ա/Ձ*
Հասցե՝ *ԱՐԱԳԱԾՈՏՆ, 0302, ԱՐԱԳԱԾ, 8 Փ., 1,*
agnumner@mail.ru : +37498415030

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Հարգելի պարոն Բրուտյան
ՀՀ Արագածոտնի մարզի Գառնահովիտի համայնքապետարանի կարիքների համար Գառնահովիտ համայնքի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.07.2020թ.-ին՝ գնանշման հարցման ընթացակարգով, կազմակերպվել է ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով ընթացակարգ:
Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար է հանդիսանում «Վարուժան Արտավազդի Գևորգյան» Ա/Ձ-ի աշխատակից Ա.Գևորգյանը:
Ընթացակարգի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետի օրվա /29.07.2020թ./ դրությամբ, ընթացակարգին հայտ են ներկայացրել «Սոլարա» ՍՊԸ-ն և «Մ.Ո.Գ-ՇԻՆ» ՍՊԸ-ն:
Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը:
Համաձայն նույն հոդվածի 3-րդ մասի սույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝ պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն), մրցույթի ծածկագիրը, «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:
Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:
Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակիցների կողմից ներկայացված ծրարները բացելուց հետո արձանագրվել է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում է ընթացակարգի ծածկագիրը և ծրարը ստորագրված չէ հայտը ներկայացնողի կողմից:
Միաժամանակ հայտնում եմ, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի բացելուց հետո արձանագրվել է, որ մասնակիցը ներկայացրել է նվազագույն գնային

Digitally signed by
GEVORGYAN
VARUZHAN
1905580073
Date: 2020.08.12
20:58:22 AMT

առաջարկ /Արժեք՝ 4 833 250, ԱԱՀ՝ 966 650, Ընդամենը՝ 5 799 900 ՀՀ դրամ/, իսկ «Մ.Ո.Գ-ՇԻՆ» ՍՊԸ-ն ներկայացրել է 5 490 000 ՀՀ դրամ գնային առաջարկ:
Ըստ էության գնահատող հանձնաժողովը՝ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը չբացելու դեպքում, մասնակցի հայտը պետք է մերժեր, իսկ ծրարի վրա գրված ընթացակարգի ծածկագիրը մասնակցի կողմից պետք է գրվի այն ընթացակարգի հետ նույնականացնելու համար: Քանի որ վերոնշյալ պատվիրատուի կարիքների համար 29.07.2020թ.-ին նշանակված է եղել միայն ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումը, հետևաբար գնահատող հանձնաժողովը նույնականացրել է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը ընթացակարգի հետ և բացել:
Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընթացակարգի շրջանակներում ի հայտ են եկել իրար հակասական խնդիրներ, և գնահատող հանձնաժողովը ըստ էության չի կարողանում ՀՀ գնումների օրենսդրությունից բխող որոշում կայացնել, խնդրում եմ Ձեզ ներկայացնել պարզաբանում՝ գնահատող հանձնաժողովի հետագա գործողությունների վերաբերյալ:
Կից ներկայացվում է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի պատճենը:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կից՝ 2 ֆայլ

Դիմող՝

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի Ա Ռ Ա Ջ Ի Ն Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆինսախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 033

N _____

<<_____>> _____20 թ.

ՎԱՐՈՒԺԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ Ա/Ձ-ին

Ի պատասխան 12.08.2020թ.
33443 գրության

Հարգելի պարոն Գևորգյան

Ուսումնասիրելով վերոնշյալ գրությունը, հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ նույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը նախագահին (նիստը նախագահողին) փոխանցվելուց հետո հանձնաժողովը գնահատում է հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և բացում համապատասխանող գնահատված հայտերը:

Միաժամանակ, փաստաթղթային եղանակով ներկայացվող հայտ պարունակող ծրարի կազմման և ծրարի վրայի անհրաժեշտ գրառումների վերաբերյալ պահանջները սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածում: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Հայտնում ենք նաև, որ նշված օրենքի 26-րդ հոդվածի համաձայն հայտերի գնահատումն իրականացնում է գնահատող հանձնաժողովը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿԱՐԵՆ ԲՐՈՒՏՅԱՆ

Կատ.Ի.Քոչարյան
011 800 147/ բջջ.091262013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/76

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

«ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի փոխտնօրեն՝

Ա. Աբրահամյանին (լիազորագիր տրված՝ 21.08.2020թ.)

Գառնահովիտի համայնքապետարանի ներկայացուցիչ՝

Ա. Գևորգյանին (լիազորագիր տրված՝ 20.08.2020թ.),

քննելով Գառնահովիտի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից Գառնահովիտ համայնքի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) շրջանակներում «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից 14.08.2020թ. ներկայացված (վարույթ ընդունված 17.08.2020թ.) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/76 բողոք), պարզեցի հետևյալը.

1. «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 14.08.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Գառնահովիտի համայնքապետարանի կողմից լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 21.07.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին չափաբաժնի մասով հայտ է ներկայացրել նաև «Սոլարա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 29.07.2020թ.-ին՝ փաստաթղթային ձևով:

Հայտերի բացման նիստի ժամանակ «Սոլարա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ՝ Արտաշես Մինասյանի ներկայությամբ բացվել է «Սոլարա» ՍՊԸ-ի հայտը՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված ծրարը և արձանագրել, որ ծրարում առկա փաստաթղթերը բավարարում են հրավերով սահմանած պահանջներին, և բանավոր հայտարարվել է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի գնային առաջարկը նվազագույն գնային առաջակն է:

Այնուհետև Մրցույթի քարտուղարը արձանագրել է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում է հրավերի 3.2 կետի 2-րդ մասով սահմանված ընթացակարգի ծածկագիրը և որոշել է մերժել Մասնակցի՝ «Սոլարա» ՍՊԸ-ի հայտը, ծրարը բացելուց և գնային առաջարկը դիտարկելուց հետո:

07.08.2020թ.-ին «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով մրցույթի քարտուղարը պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում հրապարակել է հայտերի բացման և գնահատման նիստի 29.07.2020թ.-ի թիվ 2 Արձանագրությունը, կից ներկայացվում է/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 07.08.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «4»-րդ կետում նշված է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, բայց քանի որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայել է ներկայացնողի կամ վերջինիս կողմից

լիազորված անձի ստորագրությունները և ծածկագիրը վերջինիս կողմից ներկայացված ծրարը /հայտը/ մերժվում է և նույնությամբ վերադարձվում է այն ներկայացնողին:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում մրցույթի քարտուղարը հայտերը գրանցում է գրանցամատյանում, ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը, ինչով արձանագրվում է ծրարների համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և «Գնումների մասին» ՀՀ օրենքին, հակառակ դեպքում գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ կետը՝ հրավերին և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին՝ բացառելով մասնակցի կողմից ներկայացված ծրարի բացելու հանգամանքը:

«ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը բացել է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ծրարով ներկայացված հայտը, ծանոթացել է փաստաթղթերին, ներառյալ գնային առաջարկին, հետևաբար փաստացի հաստատել է, որ հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և անցել է հայտերի գնահատման փուլ, ինչով պայմանավորված «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը՝ վերոնշյալ քայլերից հետո ենթակա չէր մերժման և նույնությամբ վերադարձման, քանի որ արդեն իսկ բացված է եղել:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող Հանձնաժողովին, չեղյալ հայտարարել 07.08.2020թ.-ի թիվ 2 արձանագրությունը ամբողջությամբ, «Սոլարա» ՍՊԸ-ին տալ ծրարի շտկման հնարավորություն, այնուհետև գնահատել մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը և որոշել «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հաղթողին:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>Գառնահովիտի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և հիմնավորումները.</u>

Գառնահովիտի համայանքապետարանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 11:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, համայնքի ներկայացուցիչն ապահովել է իր մասնակցությունը, ով հայտնել է, որ «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը սխալմամբ բացել է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ծրարով ներկայացված հայտը, ծանոթացել է փաստաթղթերին, գնահատել է, որ հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, այնուհետև նկատել է, որ ծրարը կազմված է հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանող:

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին այն հարցադրմանը, արդյոք նման պայմաններում ծրարը վերադարձվել է Ընկերությանը, թե՝ ոչ՝ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ ծրարը մինչև հիմա գտնվում է Պատվիրատուի մոտ և ներկայացրել այն:

3<u>. ԳԲՔԱ-ՆԳ-2020/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/76 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Գառնահովիտի համայանքապետարանի կողմից Գառնահովիտ համայնքի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ն և «Մ.Ո.Գ-Շին» ՍՊԸ-ն:

3. Նույն արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը:

4. Նույն արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Միաժամանակ արձանագրվել է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում էր այն ներկայացնողի կամ վերջինիս լիազորված անձի ստորագրությունները և ծածկագիրը:

5. Նույն արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ «Մ.Ո.Գ-Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի 14.08.2020թ. ներկայացված բողոքը, ԳԲՔԱ-ՆԳ-2020/76 բողոքի շրջանակներում Գառնահովիտի համայնքապետարանի դիրքորոշումը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ ենթակետի համաձայն՝ **գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:**

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) ***գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.***

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ***ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:***

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ, 3րդ, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: ***Ծրարը*** և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ***ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը*** (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ***ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝***

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ***մրցույթի ծածկագիրը.***

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4. Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:

5. ***Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:***

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

1) ***իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.***

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. ***<u>պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ</u>***, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն՝ ***<u>Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝</u>*** հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ***<u>ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից</u>***, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ընթացակարգի հրավերի Մաս 2-ի 3-րդ կետի 3.2 ենթակետի՝

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ընթացակարգի ծածկագիրը.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

Այսպես՝ Գառնահովիտի համայանքապետարանի կողմից Գառնահովիտ համայնքի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.07.2020թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ն և «Մ.Ո.Գ-Շին» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 3-րդ կետով արձանագրվել է, որ Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը:

Նույն արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Միաժամանակ արձանագրվել է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում էր այն ներկայացնողի կամ վերջինիս լիազորված անձի ստորագրությունները և ծածկագիր:

Նույն արձանագրության 8-րդ կետի համաձայն՝ «Մ.Ո.Գ-Շին» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից:

Այսպիսով՝ ուսումնասիրելով «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունների հաջորդականությունը, արձանագրում եմ հետևյալը.

«ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ բացել է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ծրարով ներկայացված հայտը, ծանոթացել է փաստաթղթերին և արձանագրել է, որ հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, այնուհետև նույն արձանագրությամբ արձանագրել է, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում էր այն ներկայացնողի կամ վերջինիս լիազորված անձի ստորագրությունները և ծածկագիրը:

Միաժամանակ արձանագրում եմ, որ Գառնահովիտի համայանքապետարանի ներկայացուցիչը բողոքի քննության նպատակով հրավիրված նիստի ընթացքում հայտնել է, որ «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը սխալմամբ բացել է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ծրարով ներկայացված հայտը, ծանոթացել է փաստաթղթերին, գնահատել է, որ հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, այնուհետև նկատել է, որ ծրարը կազմված է հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանող:

Ի պատասխան Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին այն հարցադրմանը, արդյոք նման պայմաններում ծրարը վերադարձվել է Ընկերությանը, թե՝ ոչ՝ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ ծրարը մինչև հիմա գտնվում է Պատվիրատուի մոտ:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ.

Ընթացակարգի հրավերի Մաս 2-ի 3-րդ կետի 3.1, 3.2 և 3.3 կետերի համաձայն՝

3.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և երկու օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

Ծրարը և սույն հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ***ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:***

3.2 Սույն հրահանգի 3.1 կետում նշված ***<u>ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝</u>***

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ***<u>ընթացակարգի ծածկագիրը</u>***.

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

3.3 ***<u>Սույն հրահանգի 3.1 և 3.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:</u>***

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝

2. Փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձում է այն ներկայացնողը: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: ***<u>Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ):</u>***

Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված ***ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝***

1) պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

2) ***մրցույթի ծածկագիրը.***

3) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

4) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

4.Հայտերը քարտուղարը գրանցում է գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը: Մասնակցի պահանջով այդ մասին տրվում է տեղեկանք:

5. ***Սույն հոդվածի պահանջներին չհամապատասխանող հայտերը գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:***

Վերը նշված իրավակարգավորումները հստակ ցույց են տալիս, որ եթե մասնակցի կողմից գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված ծրարը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի 3.1 և 3.2 կետերի և Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջներին, ապա գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի 3.3 կետը և Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասը, հայտերի բացման նիստում հայտերը մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընթացակարգին մասնակցելու նպատակով Ընկերության կողմից ներկայացված ծրարը արձանագրում եմ, որ ծրարի վրա նշված չէ մրցույթի ծածկագիրը, որի պահանջը հստակ ձևակերպված է Ընթացակարգի հրավերի 3.2 կետով և Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հայտերի բացման նիստում պետք է մերժեր Ընկերության հայտը և նույնությամբ վերադարձներ ներկայացնողին:

Ինչ վերաբերում է պատվիրատուի կողմից արձանագրված այն դիտարկմանը, որ «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարի վրա բացակայում էր այն ներկայացնողի կամ վերջինիս լիազորված անձի ստորագրությունները, ապա սույն մասով արձանագրում եմ, որ Ընկերության ծրարի վրա առկա է Ընկերության տնօրենի ստորագրությունը, իսկ նիստի ընթացքում Պատվիրատուի կողմից հնչեցված **այն դիտարկմանը, որ**

ստորագրությունը դրված չէ կնիքի վրա, ապա սույն մասով արձանագրում եմ, որ օրենսդրական հստակ պահանջ կամ կարգավորում թե ծրարի որ մասում պետք է դրվի ստորագրությունն առկա չէ:

Ամփոփելով վերը նշված փաստերը՝ գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Ընթացակարգի հրավերի 3.3 կետով, Օրենքի 30-րդ հոդվածի 5-րդ մասով, ինչպես նաև Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջների խախտումներ, քանի որ բացել է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ծրարով ներկայացված հայտը, ծանոթացել է փաստաթղթերին, գնահատել է, որ հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, այնուհետև նկատել է, որ ծրարը կազմված է հրավերի և «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին չհամապատասխանող, սակայն Ընկերության ծրարը այդպես էլ չի վերադարձրել ներկայացնողին, մինչդեռ՝ նախ պետք է հայտերի բացման նիստում գնահատեր Ընկերության կողմից ներկայացված ծրարի համապատասխանությունը Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված պահանջներին, իսկ այնուհետև անհամապատասխանություն արձանագրելու դեպքում կիրառեր նույն հոդվածի 5-րդ մասը, այն է՝ մերժեր վերջինիս հայտը և նույնությամբ վերադարձներ ներկայացնողին:

Ինչ վերաբերում է Ընկերության այն դիտարկմանը, որ «ՀՀԱՄ-ԳՀ-ԳՀԱՇՁԲ-20/02» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովը բացել է «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ծրարով ներկայացված հայտը, ծանոթացել է փաստաթղթերին, ներառյալ գնային առաջարկին, հետևաբար փաստացի հաստատել է, որ հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և անցել է հայտերի գնահատման փուլ, ինչով պայմանավորված «Սոլարա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարը՝ վերոնշյալ քայլերից հետո ենթակա չէր մերժման և նույնությամբ վերադարձման, որովհետև արդեն իսկ բացվել է, ապա գտնում եմ, որ Ընկերության նման պնդումն հիմնավոր չէ, քանի որ հաշվի առնելով նաև գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքները, որոնք գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից են, հետևաբար գտնում եմ, որ Օրենքի խախտմամբ իրականացված գործողությունները, որի արդյունքում խախտվել է ընթացակարգի բնականոն ընթացքը, չեն կարող լինել իրավաչափ:

Ընդ որում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է: Միաժամանակ գնումների գործընթացի կազմակերպման կարգը սահմանող ՀՀ կառավարության 05.04.2017թ. N 526-Ն որոշումը հստակ կարգավորում է գնման գործընթացի իրականացման կարգը՝ փուլ առ փուլ և ժամկետները:

Այսպիսով՝ համապատասխան ընթացակարգային կարգավորումներ նախատեսելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների իրագործմանը:

Վերը նշված հիմքերով պայմանավորված և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՍՈԼԱՐԱ» ՍՊԸ-ի կողմից 14.08.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**